


ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
1920Թ. ԱՊՐԻԼՅԱՆ
ՎԵՐԱԺՈՂՈՎՈՒՄ**



ԵՐԵՎԱՆ 2004

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



REPUBLIC OF ARMENIA

Վ. Ն. Վիրաբյան

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 1920 Թ.
ԱՊՐԻԼՅԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ**

**(Հայոց քաղաքական պատմության մի հարցի
շուրջ)**

ԵՐԵՎԱՆ 2004

Գրքույկը հրատարակվում է ամբիոնի որոշմամբ

Գրախոսներ՝

պատմ. գիտ. դոկտոր, ՀՊՃՀ Հայոց քաղաքական
պատմության ամբիոնի պրոֆեսոր՝ **Վ. Գ. Թունյան.**
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության Ինստիտուտի ավագ գի-
տաշխատող, դոցենտ **Ռ. Վ. Ղազանջյան.**

Վ. Հ. Վիրաբյան:

Հայաստանը անդրկովկասյան հանրապետությունների
1920 թ. ապրիլյան վեհաժողովում (Հայոց քաղաքական
պատմության մի հարցի շուրջ): Երևան, 43 էջ:

Վ. Հ. Վիրաբյանի գրքույկը նվիրված է Հայաստանի Առաջին
Հանրապետության (1918 թ. մայիսի 28 - 1920 թ. դեկտեմբերի 2)
քաղաքական պատմության կարևոր էջերից մեկին՝ ՀՀ
պատվիրակության գործունեության լուսաբանմանը անդրկովկասյան
հանրապետությունների 1920 թ. ապրիլյան վեհաժողովում:

Նախատեսված է պատմաբանների, ինչպես նաև այդ հարցով
հետաքրքրվող լայն հասարակայնության համար:

© «Աստղիկ» *հրատարակչություն,*
2004 թ.

© Վանիկ Վիրաբյան, 2004 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 1920 Թ. ԱՊՐԻԼՅԱՆ
ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ**

1920 թ. ապրիլին հավաքվելով Թիֆլիսում՝ Անդրկովկասի հանրապետությունները ոչ մի հիմնարար որոշում չընդունեցին, սակայն վեհաժողովի նախապատմությունը և նրա դասերը ուսանելի են՝ բացահայտելով կողմերից յուրաքանչյուրի տնտեսաֆաղաքական, դիվանագիտական կողմնորոշումները և ռազմական պատրաստվածության հնարավորությունները:

Վեհաժողովը հրավիրվեց այն ժամանակ, երբ Հայաստանում տեղի էին ունեցել դրական որոշ տեղաշարժեր: 1920 թ. հունվարին կառավարությունը դեֆակտո ճանաչվել էր մեծ տերությունների համախմբի կողմից և սահմաններում տիրում էր համեմատական խաղաղություն: 1920թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում՝ «Հայաստանի երկրորդ մայրաքաղաքում», տեղի ունեցավ Հայաստանի (Երևանի) համալսարանի հանդիսավոր բացումը:

Հարկ է նշել նաև, որ երկրի կայունացումը (թեկուզև ժամանակավորապես, ինչը լիովին պարզորոշվեց հետագայում - Վ.Վ.) զգացվեց և ժողովրդի, մանավանդ ոչ հայ տարրերի վերաբերմունքից: Կառավարությանը հաջողվեց հանդարտեցնել Կարսի մարզի մահմեդականների ընդվզումները, որոնք տազնապի մեջ էին պահում տարածաշրջանը: Դրանից հետո Կարսի մարզի մահմեդականները Հայաստանի կառավարությանը հավաստիացրին իրենց հավատարմության մեջ: Այս հանգամանքը պարզորոշ ցույց տվեց, որ ՀՀ կառավարությունը որոշակիորեն վըստահ է իր ուժերի նկատմամբ, իսկ խռովարար մահմեդականներն էլ՝ ենթարկվելու պատրաստակամությունը դրսևորեցին: Դա էլ իր հերթին ցույց տվեց, որ հանրապետությունը դեռևս

Համեմատական կայուն և համաչափ զարգացման փուլում է գտնվում, և դեռևս կարծես թե հեռու են փլուզման, անկայունություն երևույթները:

Ըստ այդմ էլ հայկական պատվիրակությունը փորձել էր այդ վեհաժողովին նախապատրաստվել քիչ թե շատ ըստ արժանվույն, առկա էր վստահությունը սեփական գործելակերպի նկատմամբ: 1920 թ. սկզբներին իրավիճակը Հայաստանում որոշակիորեն կայունացել էր, և ոգևորություն հիմք ստեղծել, սակայն առանց կառուցվածքային լուրջ հենքի: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ բոլշևիզմը, որպես ռազմաքաղաքական և հասարակական հոսանք Ռուսաստանում ամրապնդման գործընթաց էր ապրում, ընթանում էր դեպի կայունացում, սակայն առաջին պահին ոչ ըմբռնելի, որի հետևանքով հայկական դիվանագիտական-քաղաքական շրջանները հենվում էին Վրանգելի, Կոլչակի, Դենիկինի և այլոց վրա՝ կորցնելով թանկարժեք ժամանակը և ռազմավարական հնարավորությունների օգտագործման բոլոր հույսերը՝ ապավինելով եվրոպական մեծ տերությունների վերացական հավաստիացումներին, բացարձակապես չկռահելով, թե իրադարձությունների ու դեպքերի մոտակա սրընթաց այլափոխությունները և զարգացումները ինչպիսի աղետաբեր աշխարհաքաղաքական դրություն են ստեղծելու առաջին հերթին հենց Հայաստանի Հանրապետության համար: Խնդրի էությունը նրանում էր, որ Հայաստանի քաղաքական-կուսակցական դեկավար շրջանները լուրջ չէին ընդունում բոլշևիկա-քեմալական մերձեցումը և դաշինքը, հետևաբար և չէին հավատում դրա կենսունակությանը, և համոզված էին, որ վաղ թե ուշ անտանտյան երկրների համախումբը վերջ է դնելու թուրքական կայսրության գոյությունը, որի շնորհիվ էլ իբր թե հնարավոր կդառնա Հայկական հիմնահարցի լուծումը՝ միասնական և մեծ հայկական պետության ստեղծումը:

Հայտնի պատմական տարածքի վրա: Հենց այդ չարաբաստիկ հանգամանքն էլ իր կնիքը դրեց Հայաստանի Հանրապետությունից կառավարության բոլոր գործողությունների վրա, որոնք չէին բխում ժամանակաշրջանի ոգուց և չէին համապատասխանում փոփոխված աշխարհաքաղաքական իրավիճակին: Շատերը չէին ցանկանում ըմբռնել, որ ժամանակավոր շահերը, ժամանակավոր հաշիվները հարկադրում էին պատմականորեն իրար թշնամի երկու պետություններին՝ Վ. Ի. Լենինի Ռուսաստանին և Մուսթաֆա Քեմալի Թուրքիային «եղբայրական» ձեռք մեկնելու իրար և մի ճակատ կազմելու՝ ընդդեմ ընդհանուր թշնամու՝ «գրամատիրական» եվրոպայի: Հետևաբար, հարկ է նորից արձանագրել, որ Հայաստանի կուսակցական-քաղաքական ղեկավար շրջաններում լուրջ չէր ընդունվում քեմալաթուրքական-բուլղարիկյան համագործակցության հրահրված և գործնական հեռանկարը, որովհետև անսթափ հաշվարկներ և ոչ լուրջ ակնկալիքներ կային, որոնց համաձայն եվրոպական երկրների հաղթանակած անտանտյան կոալիցիան մոտ ապագայում վճռականորեն ու անվերապահորեն կայացնելու էր «հիվանդ մարդու»՝ Թուրքիայի վերջնական մահավճիռը, որի հետևանքով էլ իրականացվելու էին Սևրյան հույսերը և խոստումները:

Համաժողովի ողջ ընթացքի վերհանումը շատ ուշագրավ է կողմերից յուրաքանչյուրի քաղաքական դիվանագիտական պատրաստվածությունից մակարդակը բնութագրելու համար և հասկանալու պատմական իրադարձությունների զարգացման ողջ տրամաբանական ընթացքը՝ համաժողով, որի աշխատանքները ընթացան հասկանալի քաջքշուկի պայմաններում:

Անդրկովկասյան հանրապետությունների այս վեհաժողովը հրավիրելու դրդապատճառը Ղարաբաղյան Հայտնի իրադարձություններն էին: Նշենք, որ 1919 թ. օգոստոսի

22-ի համաձայնությունը էական փոփոխություններ չէր մտցրել հայերի վիճակի մեջ: Ադրբեջանի գեներալ-նահանգապետ Սուլթանովը մի կողմից աշխատում էր պառակտել հայերին, մյուս կողմից՝ զինվորական ուժեր համախմբել՝ գեներով ընկճելու դիտավորություններ: 1920 թ. փետրվարին ադրբեջանական բանակի զգալի մասը՝ մոտ 10000 հոգի, հավաքված էր Ղարաբաղի ճակատում¹: Ղարաբաղցիք ևս, դրսից որոշակի օգնություն ստանալով, դիմադրում էին այդ պլանների իրագործմանը: Փետրվարի 19-ին Սուլթանովը պահանջեց՝ Ղարաբաղը հայտարարել Ադրբեջանի մաս: Ղարաբաղցիները իրենց համազումարներում մերժեցին այդ անօրինական պահանջը: Ղարաբաղի հայերն ապստամբեցին՝ պաշտպանվելով ադրբեջանական վայրագություններից, կոտորածների քաղաքականություններից, սակայն այդ ապստամբությունը կազմակերպված էր անփորձ մարդկանց ձեռքով: Հետևանքները, ինչպես նշում է Ս. Վրացյանը, կարող էին լինել շատ ավելի աղետավոր, եթե ապրիլի 13-ին Ղարաբաղ չհասնեի Դրոն իր էքսպեդիցիոն գործամասով: Նա իր ձեռքը վերցրեց շրջանի իշխանությունը, ապրիլի 15-ին գորահավաք հայտարարեց Վարանդայում ու Դիզակում, ամրացրեց ճակատները և 45 օր մնաց Ղարաբաղում: Ապրիլի 22-ին Թաղավարդ գյուղում հրավիրվեց Ղարաբաղի 9-րդ համազումարը, որը 44 ձայնով մեկի դեմ մի անգամ ևս որոշեց մերժել Ադրբեջանի իշխանությունը և Ղարաբաղը համարել Հայաստանի մաս²:

Ահա այսպիսի իրավիճակ էր ստեղծվել տարածաշրջանում. միաժամանակ Բաքվում տեղի էին ունենում ներքին խմորումներ և բոլշևիկյան շարժումներ, իսկ Թիֆլիսում դաշնակիցները և անդրկովկասյան խորհրդատուները պահանջում էին վերջ տալ արյունահեղությունը, և կողմերն ստիպված էին ենթարկվել: Մարտի 27-ին Վրաստանի վարչապետ Ն. Վ. Ժորգանիան դիմեց դաշնակիցներին

ներկայացուցիչներին՝ խնդրելով նրանց միջնորդութիւնը՝ մարելու համար Ղարաբաղի հրդեհը: Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչներ Ուորդրոպը, կոմս Մարտելը և գնդապետ Գաբբան, ապրիլի 1-ին, հավաքական մի հեռագրով դիմեցին Բաքու և Երևան՝ «եռանդագին հրավիրելով» խաղաղ միջոցներով և անհապաղ լուծել Ղարաբաղի և ուրիշ գավառների հարցերը, ուր «խաղաղութիւնը վտանգված է»: «Հաշտութեան այս հանդիսավոր կոչը, եթե չլսվի այն ժամին, երբ թերևս, ամբողջ Անդրկովկասի բախտը վճռվելու վրա է, կարող է շատ ծանր հետևանքներ ունենալ ձեր կառավարութիւնների համար»: Հայաստանի կառավարութիւնը իսկույն ևեթ, ապրիլի 2-ին, պատասխանեց, թե ինքը լիովին համամիտ է դաշնակից ներկայացուցիչների առաջարկին, և իր պատգամավորները ապրիլի 5-ին կլինեն Թիֆլիսում՝ մասնակցելու համար անդրկովկասյան խորհրդաժողովին՝ նպատակ ունենալով խաղաղութեամբ լուծել բոլոր վիճելի խնդիրները: Ապրիլի 4-ին Հայաստանի խորհրդարանն էլ զբաղվեց Ղարաբաղի դեպքերով և հավանութիւն տվեց կառավարութեան վարած քաղաքականութեանը³:

Համաժողովն սկսվեց 1920 թ. ապրիլի 9-ին: Համաժողովի աշխատանքներին մասնակցում էին Անդրկովկասի ազդեցիկ քաղաքական գործիչներ. Ադրբեջանից՝ Հասան բեկ Աղաևը, Օլգերդ բեյ Կրիչինսկին, Ֆարիս բեկ Վեքիլովը (հարկ է ասել, որ այս տեսակետին չի եղել Համո Օհանջանյանը, որն իր 1920 թ. ապրիլի 8-ի նամակում՝ ուղղված Ալեքսանդր Խատիսյանին, մեր կարծիքով թյուրիմացաբար և ոչ ճիշտ գտնում է, որ ունենալով վերոնշյալ ներկայացուցիչները հայտնի կոնֆերանսում, Ադրբեջանը լուրջ նշանակութիւն չէր տալիս այդ կոնֆերանսին, ինչը լիովին չէր համապատասխանում իրականութեանը և ինչը

պարզապես հերքվում է կոնֆերանսի նյութերի անաչառ ուսումնասիրությունը, որոնցից ակնհայտ է դառնում ադրբեջանական «անփորձ» և «ոչ լուրջ» ներկայացուցիչների բավականին բարձր պատրաստվածության մակարդակը, և ընդհակառակը՝ հայ պատվիրակների թե՛ անփորձությունը, թե՛ որոշակի անպատրաստվածությունը, և թե՛ պարզապես խեղճությունը - Վ.Վ.⁴⁾, Վրաստանից՝ Ե. Պ. Գեգեչկորին, Գ. Ս. Լորդկիպանիձեն, Հայաստանից՝ Հ. Ի. Օհանջանյանը, Տ. Բեկզադյանը, Ս. Հ. Խաչատրյանը և ուրիշներ:

Համաժողովի հենց սկզբից ակնհայտ էր հայերի մեկուսացվածությունը, անպատրաստվածությունը և քաղաքական, պետա-դիվանագիտական փորձի պակասը: Ստեղծված իրավիճակը վրացիները խելամտորեն փորձում էին ծառայեցնել իրենց օգտին՝ հաճախ քողածածկված եզրեր գտնելով ադրբեջանցիների հետ: Հայ-վրացական կնճիռների հաղթահարման վճռական փորձ վերջիններիս կողմից չարվեց, չնայած հայկական պատվիրակության ձրգտումներին: Դա պարզ էր հենց առաջին հանգամանքից, երբ վճռվում էր ռազմական գործողությունների դադարեցման հարցը, որը հետաձգվում է ապրիլի 10-ից անորոշ ժամանակով՝ մինչև Ադրբեջանի կառավարությունից պատասխանի ստացումը: Փոխարենը Ե. Գեգեչկորին առաջարկում է երեք կարևոր հարցեր՝

- 1) տարածքային,
- 2) արտաքին քաղաքականության մեջ երեք հանրապետությունների քայլերի համաձայնեցում,
- 3) վեհաժողովի մասին⁵:

Այնուհետև Ե. Գեգեչկորին արտահայտում է այն միտքը, ըստ որի տարածքային հարցը՝ տարածայնությունների հիմնական աղբյուրն է, որի կարգավորման հիմքը նա համարեց երկրամասը միատարր բնակչությամբ «խա-

ղաղեցնելը», որով իբր վերջ կտրվեն երկպառակտչական կռիվներին: Այս փորձն, իհարկե, իր արտացոլումը գտավ 1989-90 թթ. «Ղարաբաղ» կոմիտեի և Ադրբեջանի համանման կազմակերպությունների գործողություններում, երբ երկուստեք ամեն ինչ արվեց ազատվելու իրենց հանրապետությունների իբր թե «ավելորդ» բնակչությունից, իսկ թե դա ինչի հանգեցրեց (ուշադրություն արժանի է նաև առհասարակ ժողովուրդների փորձն այս հարցում և մասնավորապես ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Ռուսաստանի պատմաքաղաքական կուտակած փորձը ~ Վ.Վ.), երևաց իրար զարձուցունների զարգացման հետագա ընթացքից: Դրանից ելնելով՝ Ե. Գեգեչկորին կարևորեց արտաքին վտանգի դեմ միավորման խնդիրը, ասելով, թե արդեն իրենք սկսել են այն՝ կնքելով տրանզիտային պայմանագրեր Ադրբեջանի և Հայաստանի հետ, իսկ թե դա ինչքանով էր անկեղծ, երևաց Վրաստանի հետագա դիրքորոշմամբ Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ առանձին-առանձին վերցրած:

Ապրիլի 10-ին այդ նիստում ելույթ է ունենում հայկական պատվիրակության անդամ Ստ. Գ. Մամիկոնյանը և կարևորում առաջին հերթին բախումների զաղարեցման հարցը, որին միանում է Տ. Բեկզադյանը, սակայն Գեգեչկորիի պնդմամբ նիստը դադարեցվում է, քանի որ Ադրբեջանի պատվիրակությունը դեռևս իր կառավարությունից պաշտոնական դիրքորոշման ցուցումներ չէր ստացել⁶:

Ադրբեջանական պատվիրակության ներկայացուցիչ Հասան բեկ Աղաևը հայտարարում է իր կառավարության համաձայնություն մասին ողջ Անդրկովկասի տարածքում ռազմական գործողությունների դադարեցման մասին: Ըստ այդմ էլ Գեգեչկորին առաջարկում է հետևել արդեն նշված ուղղություններին, այն է՝

- ա) Արյունալի ընդհարումների դադարեցման ուղղությամբ վեհաժողովի կողմից ձեռնարկվելիք միջոցառումների մասին,
- բ) Անդրկովկասյան հանրապետությունների տարածքային վեճերի մասին,
- գ) Արտաքին քաղաքականության հարցերի վերաբերյալ գործողությունների կոորդինացիայի մասին,
- դ) Կոնֆեդերացիայի մասին⁷:

Սակայն, ոչ պատահաբար, անշուշտ, ադրբեջանական կողմն առաջարկում է 4-րդ հարցը դարձնել առաջինը, այնուհետև արդեն՝ մնացած հարցերը: Իրավացիորեն ճիշտ ըմբռնելով ադրբեջանական պատվիրակության նըպատակադրումը՝ Հայաստանի պատվիրակ Ստ. Գ. Մամիկոնյանը առաջարկը գտավ անօգուտ և անիմաստ:

Վրաստանի ներկայացուցիչներ Գ. Ս. Մախարաձեն և Գ. Ս. Լորդկիպանիձեն համերաշխ էին վերոհիշյալ տեսակետում, գտնելով, որ հակառակ դեպքում վեհաժողովը կհանգի այլ արդյունքների: Վրացիները, ինչպես միշտ, խառնաշփոթի միջոցով ձգտում էին խճողել վեհաժողովի արդյունքները:

Հենց այստեղ Տ. Բեկզադյանը որոշակիորեն հայտարարում է այն մասին, որ եթե վեհաժողովը համաձայնության չգա ռազմական գործողությունների դադարեցման բնագավառում, ապա հայկական պատվիրակությունը չի կարող մասնակցություն ունենալ որևիցե միության ստեղծման գործում:

Ադրբեջանական կողմի ներկայացուցիչ Կրիչինսկին հատորեն խուսափում է կոնկրետությունից:

Գեգեչկորին ևս շփոթություն է մտցնում, որը ճարպիկ քաղաքական քայլ էր, գտնելով, որ եթե նախնական բանակցություններ չեն եղել, հարցը

կոնֆեդերացիայից սկսելը անօգուտ է և նպատակահարմար է այն դարձնել 2-րդը, իսկ տարածքայինը՝ 4-րդ հարց:

Հայաստանի ներկայացուցիչ Ս.Հ.Խաչատրյանը պնդում է հարցը տարածքայինից սկսելու վրա, գտնելով որ այն բարենպաստ հոգեբանական հող կստեղծի այլ վիճելի հարցերի լուծման համար: Այս քաջքշուկը շարունակվում է, և ակնհայտ է, որ այն, միանգամայն հասկանալի պատճառներով, ձեռնտու էր վրաց-ադրբեջանական կողմերին՝ համապատասխանություն մեջ գտնվելով նրանց շահերի հետ: Ըստ այդմ էլ, ադրբեջանական պատվիրակությունը համերաշխ էր Գեգեչկորիի տեսակետի հետ: Վիճաբանություններին հետո հաղթում է երեք հանրապետությունների ընդհանուր մարմին ստեղծելու մասին հարցը օրակարգում 2-րդը դնելու տեսակետը, որից հետո օրակարգն ընդունում է ներքոհիշյալ տեսքը.

- 1) Արյունոտ բախումների դադարեցում,
- 2) Անդրկովկասյան հանրապետությունների մնայուն օրգանի ստեղծում,
- 3) Տարածքային հարցեր,
- 4) Արտաքին քաղաքականություն մեջ քայլերի համակարգում,
- 5) Կոնֆեդերացիայի ստեղծում;
- 6) Տնտեսական խնդիրներ⁸:

Հետևում է Ե. Պ. Գեգեչկորիի առաջարկը՝ անցնել 1-ին հարցի քննարկմանը:

Գ. Ս. Լորդկիպանիձենն առաջարկում է. «Անդրկովկասյան հանրապետությունների վեհաժողովը, քննարկելով Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունների միջև ռազմական գործողությունների դադարեցման մասին» հարցը, որոշում է.

- 1) Հայտարարել բոլոր ռազմական բախումների դադարեցման մասին իր կտրուկ որոշումը,

2) Վեհաժողովի որոշման մասին իրազեկ դարձնել համապատասխան հանրապետությունների կառավարություններին,

3) Ընտրել հանձնաժողով՝ տեղ գտած իրադարձությունների հետաքննման համար:

Հ.Ի.Օհանջանյանը, համաձայնվելով 1-ին և 2-րդ կետերի հետ, հակառակվում է 3-րդին, միևնույն ժամանակ նշելով, որ անհապաղ պետք է որոշվի այդ հանձնաժողովի կազմը⁹:

Ադրբեջանի պատվիրակ Աղաևը բազմաշանակ շախմատային մոտեցում է ցուցաբերում հարցին: Համերաշխվելով Վրաստանի ներկայացուցիչ Լորդկիպանիձեի հետ, նա անհրաժեշտ գտավ նշել բանաձևում, որ պատերազմը մղվում է ոչ միայն Ադրբեջանում, այլև նրա սահմաններից դուրս: Հատկանշական է, որ Աղաևը փոփոխություն ենթարկելով ազգային-քաղաքական փոխհարաբերությունների ուսուցանողականությունը, ընթացող բախումներում տեսնում էր պատերազմ միայն հայտնի «ազգերի»՝ մուսուլմանների և հայերի միջև: Այդ իսկ պատճառով էլ նա պնդում էր «ուսուլմանական գործողությունները դադարեցնել այնտեղ, որտեղ դրանք տեղի էին ունենում»:

Որպես արդյունք, բանակցությունները միտումնավոր, ի վնաս Հայաստանի շահերի, ձգձգվում էին: Արդարացիորեն Հայաստանի պատվիրակությունը, ճիշտ ըմբռնելով ադրբեջանական կողմի տեսակետի կողմնակալ ուղղվածությունը, առաջարկում է «մուսուլմաններ» բառը փոխարինել «ադրբեջանցիներ» բառով: Սակայն ադրբեջանական պատվիրակությունը էլ ավելի է առաջ գնում, պնդելով, որ բանաձևում անպայման նշվի, որ հայերի և ադրբեջանցիների միջև ուսուլմանական գործողությունները ընթանում են ինչպես հանրապետությունների սահմաններ

րին, այնպես էլ Ադրբեջանի սահմաններից դուրս, օրինակ, հենց բուն Հայաստանում: Վերջին պնդումը պատճառ է դառնում, որ հարցի քննարկումը փակուղի մտնի: Արդյունքում, վեհաժողովի աշխատանքում հայտարարվում է ընդմիջում¹⁰:

Ընդմիջումից հետո Ադրբեջանի պատվիրակությունը հանդես է գալիս հայտարարություններ, համաձայն որի, նրկատի ունենալով, որ ընդհարումը տեղի է ունենում ոչ թե Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունների հպատակների միջև, այլ հենց հայերի և «մուսուլմանների», ապա Ադրբեջանը նրանց կամ այլ եկվոր մուսուլմանների՝ Հայաստանի նկատմամբ այլ գործողություններից սահմանն ազատելու համար առաջարկում է բանաձևում մատնանշել, որ խոսքը գնում է անդրկովկասյան տարածաշրջանում «մուսուլմանների» և հայերի միջև բախումների մասին: Բացի այդ, Փ. բեկ Վեֆելովի կարծիքով, համընդհանուր բախումների պայմաններում երաշխիքներ չկան, որ, բախումների շրջանները փոքրանալու են, հետևաբար անհրաժեշտ է պարզ և որոշակիորեն ցույց տալ, որ խոսքը գնում է Ադրբեջանում բնիկ հայ բնակչության և համապատասխանաբար՝ մուսուլմանական բնակչության մասին՝ Հայաստանում: Ակնհայտ է, որ ադրբեջանական պատվիրակությունը այստեղ շատ ճարպիկ հարցադրում է անում, իրերի և երևույթների իսկական շփոթ առաջ բերում, անցանկալին ցանկալիի տակ անցկացնում: Իսկ փոխարենը հայկական պատվիրակությունն առաջարկում է բախումների տեղերի մասին ընդգծել. «Դադարեցնել բախումները Ղարաբաղում, Նուխիում, Նախիջևանում, Օրդուբադում և այլ վայրերում, որտեղ դրանք տեղի են ունենում, հայերի և ադրբեջանցիների միջև՝ Անդրկովկասի սահմաններում», որը նրա կարծիքով, ընդունելի է, քանի որ խոսքը վերաբերվում է պետությունների տարածքին: Հայկական

պատվիրակութիւնն ընդգծեց, որ Հայաստանում մուսուլմաններին վիճակի կապակցութեամբ, ինչպէս և Ադրբեջանում՝ հայերի, վեհաժողովը կարող է հայտարարել ընդհանուր կարծիք, որ այս հանրապետութիւնների սահմաններում չթուլատրվի որևէիցե հալածանք ազգային հողի վրա: Իսկ եթե արդեն ընդունվելիք բանաձևում հիշատակվելու է ընդհանրապես մուսուլմանների մասին, ապա Հայաստանի կառավարութիւնը, որ խոսք է տվել դադարեցնել ռազմական գործողութիւնները, թուրքերի և քրդերի հարձակման դեպքում հարկադրված կլինի չդիմադրել և ճանապարհ բացել նրանց համար, որն, իհարկե, չի կարող ընդունելի լինել: Ավելին, Ադրբեջանի պատվիրակ Աղակը առաջարկում է ավելացնել նաև 1919 թ. նոյեմբերի 23-ի համաձայնութեան մասին:

Բանավեճի արդյունքում՝ և Լորդկիպանիձեի առաջարկութիւնների հետեանքով բանաձևն ընդունվեց հետևյալ տեսքով.

- 1) Անմիջապես դադարեցնել բոլոր արյունալի բախումները, որ այժմ տեղի են ունենում Նուխիում, Նախիջևանում, Օրդուբադում և Ղարաբադում.
- 2) Միաժամանակ վեհաժողովը պնդում է, որ Հայաստանի և Ադրբեջանի կառավարութիւններն անմիջապես ամենավճռական միջոցներ ձեռք առնեն, որպեսզի բացառվի ամեն կարգի բախումների հնարավորութիւնները հայկական և մուսուլմանական բնակչութիւնների միջև համապատասխան հանրապետութիւնների սահմաններում.
- 3) Այս որոշման մասին անհապաղ տեղեկացնել Հայաստանի և Ադրբեջանի կառավարութիւններին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար¹¹:

Շարունակելով աշխատանքները, վեհաժողովն իր՝ ապրիլի 12-ի նիստում, քննարկում է մի շատ կարևոր հարց,

որը ևս պատմագիտական հետաքրքրություն է ներկայացնում:

Նախագահն առաջարկում է անցնել Լորդկիպանիձեի բանաձևի քննարկմանը՝ մինչև ռազմական բախումները եղած իրավական ստատուսը վերականգնելու մասին:

Ադրբեջանի ներկայացուցիչ Օլգերդ բեյ Կրիչինսկին գտնում է, որ խոսք անգամ չի կարող լինել օգոստոսի 22-ի համաձայնության լիակատար վերականգման մասին, այլ ընդամենը այն փաստական վիճակի վերականգնման մասին, որը եղել է 1919 թ. նոյեմբերի 23-ի համաձայնության ժամանակ, և որում գտնվել են երկու պետությունները մինչև վերջին բախումները: Աղակը ևս պնդում է, որ ընդունվելիք որոշման մեջ չեչտը պետք է դրվի վերջին ակտի, այսինքն՝ նոյեմբերի 23-ի համաձայնության վրա: Այնուհետև վերջինս ավելացնում է, որ անկասկած, դրա մեջ մտնում է և օգոստոսի 22-ի համաձայնագիրը Ղարաբաղի Ազգային ժողովի և Ադրբեջանի կառավարության միջև, ինչպես նաև մինչև նոյեմբերի 23-ը եղած մնացյալ ակտերն ու համաձայնությունները:

Աղակից հետո հանդես եկավ Տ. Բեկզադյանը, գտնելով, որ նոյեմբերի 23-ի համաձայնությունը ոչինչ չի ասում որևիցե իրավական նորմի մասին, այլ միայն ընդունում է գենքի չօգտագործման և տարաձայնությունների դեպքում հարցերը արբիտրաժ հանձնելու մասին: Այս համաձայնությունը, ըստ վերջինիս, կարծես թե իր մեջ ներառնում է նախորդ՝ օգոստոսի 22-ի համաձայնությունը Ղարաբաղի Հայոց Ազգային ժողովի և Ադրբեջանի կառավարության միջև: Որպես պատասխան, Կրիչինսկին ռեպլիկ է բաց թողնում, ասելով, որ նոյեմբերի 23-ի ակտն արդեն իսկ կլանվում է ներկա վեհաժողովի կողմից. *«Այնտեղ ընդունվել են նույն դրույթները, ինչ որ մենք մտցրել ենք մեր որոշման մեջ»*, - պնդում է Կրիչինսկին: Այնուհետև

նա ավելացնում է, որ անհրաժեշտ է վերականգնել մինչև նոյեմբերի 23-ը եղած փաստական իրավիճակը:

Հ. Օհանջանյանն իր ելույթում ասում է, որ օգոստոսի 22-ի համաձայնությունը խախտվել է հայկական Ազգային ժողովի կողմից, սակայն նոյեմբերի 23-ի համաձայնությունը և կապը խախտվել է Ադրբեջանի կառավարության կողմից այն իմաստով, որ վերջինս արբիտրաժի փոխարեն դիմել է զենքի: Հետևաբար ըստ նրա, այդ վիճակից երկու ելք պետք է տեսնել. վերադարձ «status quo» վիճակին ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Զանգեզուրում, կամ առկա փաստական վիճակի ընդունում, վստահեցնում բախումների դադարեցման հարցում և դրանց կասեցում այնտեղ, ուր այն շարունակվում է¹²:

Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների վեհաժողովն իր՝ 1920 թ. ապրիլի 12-ի նիստում որոշում է. «Անհապաղ լիովին վերականգնել այն իրավական կարգավիճակը, որը գոյություն է ունեցել մինչև բախումները՝ հենվելով Հայաստան-Ադրբեջանի և Անդրկովկասյան հանրապետությունների վեհաժողովի կողմից ձեռք բերված համաձայնություններին, հավասարապես համապատասխան կառավարությունների հետ Ազգային Խորհուրդների պայմանագրերին»¹³:

Կրիչինսկին հակառակվում է դրան, պնդելով, որ օգոստոսի 22-ի համաձայնությունը շատ կետերում խախտվել է, և այժմ կարող է խոսք գնալ այն սահմաններին վերադառնալու մասին, որոնք եղել են նոյեմբերի 23-ի ժամանակ, որպես վերջին ակորդի, որը և իրենք ձգտում են դիտել որպես ելակետ՝ հաստատելով փաստական իրավիճակը սահմանների առումով¹⁴:

Այնուհետև ելույթ է ունենում Տ. Բեկզադյանը՝ սկզբունքորեն կարևոր դիտողություն անելով: Տ. Բեկզադյանը պնդում է, որ տեղի է ունեցել

Հասկացությունների որոշակի շփոթ՝ չժխտելով, որ Ադրբեջանը տիրել է Ղարաբաղին (թեկուզ և ժամանակավորապես, խաբելով Հայերին), ուրեմն խոսք անգամ չի կարող լինել բնակչության հետ համաձայնության մասին (հենց այստեղ հակասություն կա, քանի որ համապատասխան, թեկուզև ժամանակավոր համաձայնեցում կայացել էր - Վ.Վ.): Այնուհետև, շարունակելով զարգացնել իր խիստ հակասական խոսքը, Տ. Բեկզադյանը գալիս է այն եզրահանգման, որ այստեղ արդեն ոչ թե տիրապետություն է, այլ Հայտնի Համաձայնությունը՝ հատուկ պայմանների հիման վրա: Նրա կարծիքով, եթե այդ համաձայնությունը խախտվել է այս կամ այն կողմից, ապա պետք է վերականգնել բախումներից առաջ եղած «status quo ante»-ն, այսինքն՝ իրավիճակը, որի դեպքում Ղարաբաղը կարող է լինել Ադրբեջանի տիրապետության ներքո՝ այս կամ այն հիմնավորման պայմաններում, Ազգային խորհրդի հետ կայացած համաձայնությունը¹⁵:

Տեղին է այստեղ հստակ ասել. Ադրբեջանի դիվանագիտական պատվիրակները բոլորովին էլ նորակոչիկների տպավորություն չէին թողնում, առավել ևս Կրիչինսկին, այն դեպքում, երբ հայ պատվիրակ - դիվանագետները տուրք էին տալիս զգացմունքայնությունը, իրավիճակից չբխող ոչ համակողմանի ու ոչ սթափ, անհեռանկար գնահատականների: Այսպես, Կրիչինսկին հանդես գալով Բեկզադյանից անմիջապես հետո, այն տեսակետը պնդեց, որ Ղարաբաղի Ազգային խորհրդի հետ օգոստոսի 22-ի համաձայնությունը չպետք է ընդունել որպես միջազգային բնույթի ակտ, այլ որպես հրահանգչային (ինստրուկցիոն) բնույթի ներքին կառավարման ակտ¹⁶: Այո՛, սա դիվանագիտական պաճուճաբանության և մանևրումի փայլուն և դասական նմուշ է, դիմացիներին հիմարացնելու լավ, դարերով փորձված ձև:

Տ. Բեկզադյանը հակառակվում է վերոհիշյալ տեսակետին, և ավելի հզոր կռվան չգտնելով, պնդում է, որ այդ ակտը չհրատարակվելու դեպքում պարզ կդառնա, որ այն ոչ թե ներքին կառավարման հրահանգ է եղել, այլ հենց միջազգային բնույթի համաձայնություն, ընդ որում Ադրբեջանի կառավարության կողմից հորինված և հավանություն արժանացած¹⁷:

Ինչպես և սպասվում էր, Ադրբեջանի ներկայացուցիչ Կրիչինսկին չի համաձայնվում այս տեսակետի հետ (և ոչ առանց հիմքերի, նկատելով, որ դարաբաղցիները, թեկուզև ժամանակավորապես համաձայնվել են ենթարկվել Ադրբեջանի իշխանությունը - Վ.Վ.) ասելով, որ այն բանից հետո, երբ Ղարաբաղն օգոստոսի 22-ի ակտով ընդունել է Ադրբեջանի իշխանությունը, դարաբաղյան հարցը դարձել է ադրբեջանական կառավարության ներքին հարց: Եվ եթե այստեղ պնդում են, որ Ղարաբաղը զբաղեցնում է միանգամայն մեկուսացված վիճակ, ապա դրանով ստեղծվում է պետություն պետության մեջ¹⁸:

Ինչքան էլ ցավալի է, հարկ է այստեղ ընդգծել հայ պատմաքաղաքական գրականության կողմից այս փաստը կամ սքոդելու, կամ պրոբլեմից խուսափելու նպատակով մի էական նկատառումի մասին՝ ոչ ձեռնտու նյութերի քողարկման, ինչպես նաև հարցի համակողմանի լուսաբանումից և քաղաքական իրատեսական գնահատականներ տալուց փախուստ տալու ակնհայտ ձգտում դրսևորելու առումով: Ակնհայտ է, որ 1919 թ. օգոստոսի 22-ի ակտով Ղարաբաղը և հայերը, Հայաստանը թույլ են տալիս շատ սկզբունքային կոպիտ սխալ, թեկուզև ժամանակավորապես (սա շատ կասկածելի, անլուրջ մոտեցում է դիվանագիտական-քաղաքական հարաբերություններին-Վ.Վ.) համաձայնվելով ընդունել Ադրբեջանի իշխանության գերակայությունը:

Անհրաժեշտ է նաև հատուկ ընդգծել, որ Ղարաբաղի Ազգային խորհուրդը նման վտանգավոր, քաղաքական տեսակետից անցանկալի համաձայնությունը տվել էր, ողջ հուլիսը կտրելով որևիցե ռեալ օգնություն ստանալու մետրոպոլիտայից՝ «Երևանի կառավարությունից»: Իսկ եթե ըստացավ էլ, ապա ուշացած և ոչ լիարժեք: Սա փաստ է, և կարևոր է մատնանշել, որ ադրբեջանական կառավարության համար այդ «ժամանակավորապես»-ը ոչ մի սահմանափակումներ չունեցող ընդգրկում էր, և այստեղ նրանք «իրավացի էին», շահարկելով այդ հանգամանքը: Այլ բան է, որ հայերը փորձում էին այս վեհաժողովում իրենց կրած դիվանագիտական-քաղաքական պարտությունը (այդպես էլ է լինում, բայց չպետք է լինի) չընդունել կամ փորձել դուրս գալ փակուղային վիճակից: Այ սա արդեն ըմբռնելի է:

Ինչևիցե, Բեկզադյանը և Կրիչինսկին տեսակետների համաձայնության չեն գալիս, ընդունելով երկուստեք, որ դա ընդամենը սովորական իրավական ակտ է: Դրանից հետո շիլաչփոթային բանաձևումով հանդես է գալիս Գեգեչկորին, իբրև թե փորձելով կողմերին խելքի բերել, հաշտեցնել կամ գտնել հարցի միջանկյալ լուծման բանալին: Նրա կարծիքով անհրաժեշտ էր վերականգնել մինչև բախումների պահը եղած իրավիճակը, քանի որ դրա վրա էր հիմնված և 1919 թվականի նոյեմբերի 23-ի համաձայնությունը, որը երկու կողմերն էլ ընդունում են: Շարունակելով անցկացնել իր հայեցակետը, վերջինս գտնում է, որ Ղարաբաղի կամ այլ հարցի վերաբերյալ սխալ է թույլ տրվել և այդ կարգավիճակի վերականգնման համար հարկ է կարգի հրավիրել կողմերին: Այնուհետև վերջինս եզրակացնում է, որ հայտնի տարածաշրջանում ապստամբություն է եղել, թե բնակչության հարձակում պահակազորերի վրա կամ բռնություններ, զինաթափում:

դրանք պետք է լուծում ստանան վեհաժողովում: Ավարտելով իր միտքը՝ վրաց հայտնի դիվանագետ, ճարպիկ քաղաքագետ Ե. Գեգեչկորին հանգում է այն բանին, որ պետք է վերադառնալ հայտնի ելակետին, որը մեկ անգամ ևս հաստատվել է նոյեմբերի 23-ի համաձայնությունում, շեշտելով այն հանգամանքը, որ այդ համաձայնությունն իր մեջ ներառնում է օգոստոսի 22-ինը¹⁹: Իսկ և իսկ ճապարհ դիվանագիտության «փայլուն» դասական նմուշ, որը և դրսևորում էր վերաց դիվանագիտության պատրիարքներից մեկը՝ մենչևիկ Գեգեչկորին:

Վերջինիս որպես պատասխան, Օհանջանյանը ընդամենը պնդում է, որ համաձայնության մեջ մտցնեն օգոստոսի 22-ի իրավական ակտը²⁰: Վերջապես ընդունվում է մի բանաձև, որին երկու կողմերն էլ համաձայնվում են՝ հետևյալ տեսքով. «Անհապաղ լիովին վերականգնել այն իրավական ստատուսը, որը գոյություն է ունեցել մինչև բախումները, և հենվել է այն համաձայնության հիմքի վրա, որ ձեռք է բերել հայ-ադրբեջանական և Անդրկովկասյան հանրապետությունների վեհաժողովներում, հավասարապես Ազգային խորհուրդների և համապատասխան կառավարությունների պայմանագրերում»:

Թվում է, թե ինչ-որ տեղ սառույցը հալվեց, սակայն դրանից անմիջապես հետո (առաջին հայացքից՝ թվում է պատահաբար) ադրբեջանական պատվիրակ Աղաևը հրապարակում է հեռագիր՝ հայերի կողմից Ղազախի շրջանում զինադադարի խախտման մասին: Սա մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ շատ հաճախ կարելի է ասել մի բան, անել մի այլ բան՝ սակայն առաջ տանել սեփական գործը, ինչը և ադրբեջանցիներն անում էին, այն դեպքում, երբ Հաստատում հաճախ զբաղվում էին միայն դիվանագիտական թղթախաղով՝ իրերի հետևում չտեսնելով իրադարձությունների զարգացման իրական ընթացքը:

Այնուհետև նախագահն առաջարկում է անցնել հանձնաժողովների մասին հարցին, որոնք պետք է գնային և տեղերում պարզեին, թե իրականացե՞լ են արդյոք վեհաժողովի որոշումները: Որոշվում է հանձնաժողովներին տալ վեհաժողովի լիազորություններ, որից հետո վեճեր են ընթանում երկու՝ հայկական և ադրբեջանական հանձնաժողովներ ստեղծելու մասին, որն առաջարկում է Գեգեչկորին, և մեկ հատ՝ 6 հոգիանոց՝ Լորդկիպանիձեի առաջարկությամբ:

Վերջնականապես վեհաժողովը որոշում է ստեղծել մեկ հոգիանոց հանձնաժողով, որի նպատակն էր՝

- 1) տեղում անցկացնել և վերահսկել վեհաժողովի որոշումների կենսագործումը՝ կապված արյունալի բախումների դադարեցման և «status quo ante»-ի վերականգնման հետ,
- 2) ուսումնասիրել տեղի ունեցող բախումների պատճառները և պատկերը²¹:

Վեհաժողովն իր աշխատանքները շարունակում է ապրիլի 13-ին: Նիստին Օհանջանյանը հայտարարում է, որ ուղիղ հեռախոսագծով զրույց է ունեցել իր կառավարության հետ, և տեղեկացել, որ ապրիլի 12-ին հեռագիր է ուղարկվել Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Խան-Խոյսկուն: Այնուհետև Օհանջանյանը հրապարակում է Հ. Տեր-Հակոբյանի հաղորդումը՝ արտաքին գործոց նախարարության կողմից Խան-Խոյսկուն ուղարկված հեռագրի մասին: Հեռագրում հաղորդվում էր, որ վերջին օրերին Ղազախի գավառի սահմաններում ադրբեջանական զորքերի վարքագիծը հակասում է Խան-Խոյսկու և տեղական հայկական վարչակարգի միջև կայացած համաձայնությամբ ձեռք բերված իրավիճակին, ըստ որի ռազմական գործողությունները երկուստեք՝ մինչև ապրիլի 12-ի առավոտյան ժամը 10-ը պետք է դադարեցվեին: Հարց է

բարձրացվում դադարեցնելու ադրբեջանական զորքերի կուտակումները, անկարգությունները և բռնությունները և ձեռնարկվելիք գործողությունների մասին: Այնուհետև հավաստիացվում էր, որ հայկական կողմը հավատարիմ է մնում համաձայնության ոգուն: Հայկական կողմը տեղեկացնում է վեհաժողովին, որ իրենց կառավարությունը կողմից տրված են համապատասխան հրահանգներ ռազմական գործողությունների դադարեցման մասին: Նմանատիպ հարցում է արվում Ադրբեջանի ներկայացուցիչներին՝ պարզելու համար նրանց կառավարության դիրքորոշումը: Աղաքը հարցմանը դրականորեն է պատասխանում²²:

Արանով, Իհարկե, գործը չի ավարտվում: Հատկանշական է, որ ապրիլի 13-ին հենց Ադրբեջանի ներկայացուցիչ Կրիչինսկին հերթական ադրբեջանական «անակընկալն է» մատուցում՝ հայտարարություն անելով վեհաժողովի կողմից ապրիլի 12-ին ընդունված բանաձևի կապակցությամբ: Վերջինիս ելույթում ընդգծվում էր, որ վեհաժողովի կողմից 1920 թ. ապրիլի 12-ին Ազգային խորհուրդների և համապատասխան կառավարությունների միջև կայացած պայմանագրերի հիման վրա իրավական «status»-ը վերականգնելու անհրաժեշտություն մասին բանաձևի առումով ադրբեջանական պատվիրակությունը հարկ է համարում «ոչ ճիշտ» հասկացվելուց խուսափելու համար հայտարարելու, որ 1919 թ. օգոստոսի 22-ի ակտից բխող իրավական կարգավիճակը հանգում է Ղարաբաղի հայտնի մասերի ենթարկման հաստատմանը Ադրբեջանի կառավարության գերակայությունը հայտնի տարածքային սահմաններում, եթե դրանք ներկայումս խախտվել են տեղի ունեցած բախումների հետևանքով, և պետք է ըստ հայտնի բանաձևի միջոցառումներ ձեռնարկել դրանց վերացման համար²³:

ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանին հասցեագրված իր 1920 թ. ապրիլի 14-ի նամակում Համո Օհանջանյանը նըշում է ադրբեջանական կողմի սուլյն տեսակետի մասին, ասելով, որ *վեհաժողովի ադրբեջանական պատվիրակները հայտարարել են, որ «status quo ante»-ի (նախնական վիճակ - Վ.Վ.) վերականգնում ասելով իրենք հասկանում են ընդամենը սահմանների վերականգնման իմաստով, իսկ Ղարաբաղի ներքին կարգավիճակը իրենք հասկանում են Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկվելու իմաստով և ոչ ավելին*²⁴:

Որպես պատասխան Տ. Բեկզադյանը սուլյնին առարկում է՝ պատճառաբանելով, որ անհարկի է արդեն ընդունված բանաձևում փոփոխություններ մտցնել: Գեգեչկորին առաջարկում է վերացնել այդ հարցը, ընդունված բանաձևը հանձնել մամուլ, իսկ արված հայտարարությունն առթիվ բանավեճ չծավալել²⁵: Հասկանալի նկատառումներով Ադրբեջանի ներկայացուցիչ Կրիչինսկին դեմ է արտահայտվում մամուլում բանաձևը տպագրելուն, որին հակառակվում է Գեգեչկորին, որի առաջարկն էլ անցնում է:

Ադրբեջանական կողմը հայտարարում է, որ իր կառավարությունը երբեք չի կարող համաձայն լինել այդ ուրոշմանը, ետ կանգնելով իր իսկ համաձայնությունից՝ տրված ապրիլի 12-ին: Հայկական պատվիրակությունը ճարահատյալ համաձայնվում է հետաձգել բանաձևի հայտարարումը երկու օրով: Արդյունքում, հայկական կողմը վրացական չեզոքության շնորհիվ և ադրբեջանցիների պնդմամբ՝ հայտնվում է փակուղային վիճակում:

Հաջորդ հարցի՝ անդրկովկասյան հանրապետությունների միասնական մարմնի ստեղծման շուրջը համաձայնություն է կայացվում: Վեհաժողովի՝ ապրիլի 14-ի նիստում քննարկվում է բախումների վայրերը հանձնաժողովներ ուղարկելու հարցը: Հայկական կողմը պնդում է,

որ առաջին հերթին Ղազախ հանճնաժողով ուղարկվի, որից հետո անցնում են ապրիլի 12-ի որոշման վերանայմանը:

Կրիչինսկին ընդգծում է, որ ներկայումս իրենք չունեն միջազգային քննարկման այն օբյեկտը, որի դեպքում իրենք իրավասու են պնդելու պահպանել որևիցե պայմանագիր:

Բեկզադյանի պնդմամբ, ռազմական գործողությունների պայմանների խախտումով համաձայնությունը կորցրել է իր ուժը, և Կրիչինսկու կողմից առաջարկվող իրավական կարգավիճակին վերաբերվող ուղղումը պետք է մերժել (այն է՝ ժամանակավոր տարանջատիչ գծերին վերաբերվող):

Կրիչինսկին պնդում է իր ենթադրությունը: Վերջինս գտնում էր, որ եթե մինչև հայտնի ժամանակը պետական իշխանությունը Ղարաբաղում պատկանել է Հայկական Ազգային խորհրդին, ապա, թեկուզ ժամանակավորապես, Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու պահից սկսած, այդ խորհրդի իշխանությունը վերացել է, տարրալուծվելով Ադրբեջանի Հանրապետության գերիշխանության մեջ, և նշված պահին Ղարաբաղում գոյություն ունի միայն այդ գերիշխանությունը (սուվերենությունը), քանի որ իրավաբանական առումով երկու գերիշխանություն միևնույն տարածքում չեն կարող լինել: Ադրբեջանական կառավարությունն այս տեսակետից չի հրաժարվում²⁶: Հարկ է խոստովանել, որ Կրիչինսկու տեսակետը իրավաբանական առումով իրոք որոշակիորեն անխոցելի հիմնավորված էր, ինչից էլ հմտորեն կառչում էր ադրբեջանական կողմը և հայկական կողմին նեղը գցում իր հակափաստարկներով: Ավելին, անժխտելի է, որ այն քաղաքական առումով էլ յուրօրինակ մոտեցում է, որը Կրիչինսկին և ադրբեջանական պատվիրակությունը հրաշալի ըմբռնում էին, ամեն մի հաշվարկ կառուցելով սեփական ազգային-պետական շահի գերակայության դիրքերից, վերջին հաշվով

քաղաքականությունը միշտ էլ եղել է մուլթ հաշվարկների և ունեւ շահերի բնագավառ: Իսկ եթե Ադրբեջանը կարողացել է, թեկուզև ժամանակավորապես (վերջին հաշվով պարզ չէր նաև, որքան էր այդ «ժամանակավորապես»-ի տևողությունը) Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդին համոզել ընդունել Ադրբեջանի գերակայությունը, դա պետք է դիտել որպես դիվանագիտական-քաղաքական պարտություն հայերի և Հայաստանի համար, իսկ Ադրբեջանի համար՝ որպես գեղեցիկ և յուրօրինակ հաղթանակ: Իսկ պարտության հետևանքների տակից դուրս գալու համար որոնել զանազան էմոցիոնալ գուններանգներ, թուլության արդարացման տարբերակներ, դա քաղաքական և պատմական առումով ոչ հեռանկարային, ոչ պատվաբեր և վնասակար գբաղմունք է, որից անհրաժեշտ էր հրաժարվել, ինչը հայկական կողմը հաշվի չէր առնում: Ավելին, այն չի ըմբռնվել նաև նորօրյա աշխարհաքաղաքական գործընթացներում, որից տուժում է հայկական կողմի քաղաքական հաշվարկը և մտածելակերպը:

Ինչևիցե:

Ս. Խաչատրյանը պնդում է, որ վեհաժողովի չկայանալու դեպքում հայկական կառավարությունը գուցեև համաձայնվի վերոհիշյալ դրույթի հետ, սակայն վեհաժողովը պետք է քննարկի Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի սուվերեն իրավունքների իրավագորության հարցը, և եթե ադրբեջանական կառավարությունը խախտել է պայմանագրի պայմանները, ապա այն արդեն կորցնում է իր իրավունքները, բացի այդ՝ գոյություն են ունեցել պայմանագրային հարաբերություններ, հարաբերություններ հայտնի մարզերի և կառավարության միջև: Փոխարենը Ադաևն ասում է, որ իրենք չեն ցանկանում, որ վեհաժողովը հաստատի ուժի իրավունքը, որ պատերազմ չի եղել, այլ այնտեղ եղել է խռովություն, և կառավարությունը գինված

ուժի միջոցով կարգ ու կանոն է հաստատել, և առաջարկում է ընդունել իրենց բանաձևը:

Այնուհետև Լորդկիրպանիձեն պնդում է, որ, անկասկած, դարաբաղյան հարցն ունի միջազգային բնույթ: Ըստ նրա, համաձայնություն պայմանագրային ակտում ասվում է, որ Հայկական բնակչությունը ենթարկվում է Ադրբեջանի կառավարությունը մինչև խաղաղության վեհաժողովի որոշումը (սա, անշուշտ, ուշագրավ մոտեցում է - Վ.Վ.), և դրա հետ պետք է հաշվի նստել, որպես միջազգային փաստաթղթի: Եվ քանի որ տվյալ պահին տեղի է ունեցել այդ համաձայնության մասին վավերագրի խախտում, ապա գործի շահերը պահանջում են, որպեսզի երկու կառավարությունները վերականգնեն նախկին իրավիճակը: Եվ եթե վեհաժողովը կարողանա պահպանել միջազգային իրավունքների մաքրությունը, ապա հնարավոր է՝ գործը դրանից շահի: Ըստ Լորդկիրպանիձեի եզրափակիչ մտքի, հարկ է, որ ադրբեջանական կողմը հաշտվի բանաձևի նախնական՝ առաջին տարբերակի հետ²⁷:

Փորձառու Գեգեչկորին, որոշակիորեն և ոչ պատահաբար «հակառակվելով» իր գինակցին, առաջարկում է ոչինչ չստղ մի այլ բանաձև, ըստ որի վեհաժողովը պետք է ելնի այնպիսի դրույթներից, որոնք երաշխավորեն խաղաղությունը և անդորրը տարածաշրջանում:

Ելույթով նրան հաջորդած ՀՀ պատվիրակ Մամիկոնյանը պնդում է, որ Ադրբեջանի կառավարությունը միայն ժամանակավորապես է տիրել Ղարաբաղին: Հայկական բնակչությունը, աջակցություն չստանալով Հայաստանի կառավարության կողմից, հարկադրված է եղել համաձայնել միայն ժամանակավորապես ենթարկվելու Ադրբեջանին: «Վեհաժողովը պետք է հաշվի առնի փաստերը և այն բոլոր երևույթները, որոնք տեղի են ունեցել վերջերս», - գտնում էր Ստ.Մամիկոնյանը: Շարունակելով զար-

զացնել իր միտքը, վերջինս պնդում է, որ եթե Ադրբեջանի կառավարությունը դժվարանում է համաձայնվել այս դերույթի հետ, ապա նա պետք է հաստատի այն հրապարակավ, այլապես վեհաժողովի մասին խոսք անգամ չի կարող լինել:

Այնուամենայնիվ, հակառակվելով հայկական տեսակետին, ադրբեջանական կողմը՝ ելնելով սեփական շահերից, համաձայնվում է հայտնի բանաձևը կիրառության ընդունել, բայց միայն իրեն ձեռնտու փոփոխություններ և ուղղումներ մտցնելուց հետո: Եվ հենց այստեղ ճարպիկ վրացին՝ Գեգեչկորին, աճապարարի հմտությամբ շատ «խորիմաստ» տեսակետ է առաջարկում, ասելով, թե կարո՞ղ է արդյոք Ադրբեջանի պատվիրակությունը երաշխավորել Ղարաբաղի հայ բնակչության իրավունքները: Բնականաբար ադրբեջանական կողմն ակնթարթորեն որոշակի պատրաստակամություն է արտահայտում, և այս կապակցությամբ հանդես եկած Աղակը ադրբեջանական կառավարության անունից հայտարարում է, որ իր կառավարությունը տեղերը վերադարձող Ղարաբաղի լոյալ հայ բնակչության համար կապահովի բոլոր ազգային-կուլտուրական իրավունքները, որոնցից նա օգտվել է մինչև բախումները²⁸:

Որպես պատասխան ՀՀ պատվիրակ Օհանջանյանը այս կապակցությամբ ընդգծում է, որ դեկլարացիայում «լոյալ» և «ազգային-կուլտուրական իրավունքներ» բառերի հիշատակումը իրենց չի բավարարում, քանի որ Ղարաբաղում բացի այդ իրավունքներից, կան այլ իրավունքներ ևս: Հարկ է հատուկ մատնանշել, որ սա ևս շատ ճապարհուն, անսկզբունքային մոտեցում էր քաղաքական բարդ խնդրին, որից ակնհայտ է, որ պետք է կառչելին ադրբեջանցիները, իրենց հարմար մոտեցում առաջարկելով:

Գեգեչկորին էլ «փորձելով շտկել» իրավիճակը՝ առաջարկում է սեփական կիսատ-պռատ մոտեցումը հարցի լուծման վերաբերյալ. վեհաժողովը, նկատի ունենալով ադրբեջանական պատվիրակության ղեկավարացիան, լիակատար համաձայնություն է հայտնում՝ այդ ամենի կենսագործման վստահությունով: Հայկական պատվիրակությունը պնդում է, որ պեսզի ղեկավարացիայում վերապահում արվի, այսինքն՝ ապահովվեն այն բոլոր իրավունքներն ու պարտականությունները, որոնցից հայկական բնակչությունը օգտվել է: Այդ առումով հայկական պատվիրակությունը հայտարարում է, որ այդ ղեկավարացիան իրենց չի բավարարում, և հետևաբար, չեն կարող համաձայնվել վերոհիշյալ որոշման հետ:

Ադրբեջանի ներկայացուցիչ «բազմազմուտ» Կրիչինսկին հայտարարում է, որ որոշում չլինելու դեպքում, իրենք իրենց հայտարարությունը ետ են վերցնում. ստեղծված իրադրությունում միանգամայն ճիշտ և ճկունորեն կողմնորոշվելու փայլուն դիվանագիտական ընդունակության դրսևորում: Այնուամենայնիվ, Աղակը հրապարակում է Ադրբեջանի պատվիրակության հայտարարությունը՝ կապված Լորդկիպանիձեի նոր առաջարկության հետ:

Ադրբեջանի Հանրապետության կառավարության անունից նա հայտարարում է, որ Ադրբեջանի կառավարությունը Ղարաբաղի հայկական բնակչության նկատմամբ, որը պետք է վերադառնա իր բնակավայրերը, կպահպանի ազգային-մշակութային իրավունքները, որոնցից նա օգտվել է մինչ այդ: Ի դիտություն ընդունելով այդ հայտարարությունը, վեհաժողովը որոշում է հեռագրեր ուղարկել այն տեղերը, ուր դեռ շարունակվում են արյունալի բախումները, և բացի այդ՝ դիմել Անդրկովկասի ժողովուրդներին՝ հատուկ հայտարարությամբ²⁹:

Իր հետագա աշխատանքում վեհաժողովը (ապրիլի 17-ի նիստում) լսում է նաև Ղազարի մեկնած հանձնաժողովի կարծիքը: Հանձնաժողովի անդամ Գ. Մախարաձեն գեկուցում է, որ բախումը սկսվել է ապրիլի 5-ին, իսկ 9-ին տեղական բնակչության նախաձեռնությամբ՝ դադարեցվել: Սակայն հենց դրանից անմիջապես հետո տեղի են ունեցել գլխավոր իրադարձությունները: Այրվել են 10 գյուղ, որոնցից 9-ը՝ մուսուլմանական, մեկը՝ հայկական: Այս իրադարձությունները տեղի են ունեցել ապրիլի 10-ից 17-ն ընկած ժամանակահատվածում: Տեղեկացվեց, որ հանձնաժողովը հանդես է եկել կոչով՝ դադարեցնելու բախումները և վերադառնալու սեփական բնակության վայրերը: Այս կապակցությամբ Խան-Խոյսկին հրապարակում է Արզրբեջանի ներքին գործերի նախարարության հեռագիրը: Վեքիլովի հաղորդման համաձայն Ղազարիում մուսուլմանական բնակչությունը հայտնվել է տազնապի մեջ և վախենում է նոր հարձակումներից³⁰: Պատասխանով հանդես եկած Ստ. Մամիկոնյանը, ոչ այնքան վստահ լինելով սեփական մոտեցման լիարժեքության մեջ, հայտարարում է, թե ինչպես կարող էր նման հեռագիր ստացվել (իսկ դիվանագետը պարտավոր է դա հասկանալ - Վ.Վ.), քանի որ իրենք բախումների նախօրյակին եղել են այնտեղ, գրուցել երկու կողմերի՝ գյուղացիության և գեներալ-նահանգապետի հետ, և ոչ մի այդպիսի հայտարարություն չի արվել³¹:

Վրաց պատվիրակներն էլ ավելի են ուժեղացնում շրփոթը վեհաժողովում: Իբր թե զարմանալով նման արագ փոփոխությունից՝ Մախարաձեն հայտարարում է, որ դա հապճեպ ուղարկված հեռագիր է, իսկ Գեգեչկորին էլ պընդում է, որ պատճառը պետք է որոնել զարաբաղյան իրադարձությունների մեջ, առաջարկելով անհապաղ երկրորդ պատվիրակությունն ուղարկել դեպքի վայրը, ասելով նաև,

որ իրենք տարածայնություն ունեն կարգավիճակի հարցում, սակայն բնակչությունը պետք է վերադառնա իր սեփական բնակության վայրերը. այլ կարծիք լինել չի կարող՝ վերաբերի դա Ղարաբաղին, թե այլ տարածքի³²:

Պատասխան ելույթով հանդես եկած Կրիչինսկին էլ առաջարկում է սեփական հանգուցալուծումը, գտնելով, որ Ղարաբաղյան հարցը պետք է առանձնացնել քննարկվող հարցախմբից, իսկ Ղազախի իրավական կարգավիճակի մասին խոսք անգամ չի կարող լինել, այլ ընդամենը պետք է վերականգնել սահմանները: Փոխարենը Հայաստանի պատվիրակ Ստ. Մամիկոնյանը հայտնում է, որ իրենք առաջնորդվել են նպատակահարմարության սկզբունքով, և ինքը ցանկանում է, որ վեհաժողովում պարզվի, թե ի՞նչ կարգավիճակ պետք է լինի Ղազախում (կարծես թե Ղազախը ի սկզբանե, անհիշելի ժամանակներից անվիճելի ադրբեջանական տարածք է հանդիսացել: Շատ տարօրինակ է հայկական պատվիրակութայն նմանօրինակ մոտեցումը, թե՞ պատմությունից անտեղյակ էին, թե՞...~ Վ.Վ.):

Վտանգ զգալով, Ադրբեջանի ներկայացուցիչ Խան-Խոյսկին խելամտորեն այն կարծիքն է արտահայտում, որ այդպիսի առանձին-առանձին մոտեցումը հարցին (Ղազախին) կարող է բարդացնել դրա լուծումը: Խան-Խոյսկին կարծիք է հայտնում, որ Ղազախում խախտվել է հայտնի տարանջատիչ (դեմարկացիոն) գիծը, և այն խախտվել է հայերի կողմից, որոնք գրավել են Ադրբեջանի տարածքի մի մասը: Հետևաբար, ըստ նրա, հայերը պետք է ետ գնան իրենց տեղը, և դա չպետք է շփոթել Ղարաբաղի հետ: Ըստ Խան-Խոյսկու, Ղարաբաղը ևս Ադրբեջանի տարածք է, և այստեղ գործն առնչվում է Ադրբեջանի կառավարության ներքին իրավակարգի հետ, և որ խոսքը գնում է Ղարաբաղի հայկական բնակչության իրավական վիճակի մասին, այն մասին, թե ինչպիսին է Ադրբեջանի կառավարության

վերաբերմունքը իր բնակչության հայտնի մասի նկատմամբ (փայլուն ձևակերպում - ընդգծումը մերն է - Վ.Վ.), իսկ Ղազախում խոսքը գնում է սոսկ տարանջատիչ գծի մասին: Ըստ Խան-Խոյսկու Ղարաբաղում խոսք է գնում ապստամբության մասին, և կարծիք է հայտնվում, որ այնտեղ մեկնող հանձնաժողովը գուցե և կարողանա ընդարձակել հայկական բնակչության արտոնությունները, և դժբանով իսկ հարցը լուծել³³: Վերջ, հենց այսպես: Հենց այսպես պետք է մոտենալ դիվանագիտական-քաղաքական հարցին, հենց այսպես պետք է մանևրել և շփոթեցնել դիմացիին, ինչը և փայլուն դրսևորում էին Ադրբեջանի պատվիրակները Անդրկովկասյան հանրապետությունների թիֆլիսյան վեհաժողովում:

Դրա փոխարեն Հայաստանի պատվիրակ Ս. Խաչատրյանը դիվանագիտական առումով կարծր դիրք բռնելու և ավելի ճկուն տարբերակ առաջարկելու փոխարեն, կարծիք է արտահայտում, ըստ որի, որպեսզի վեհաժողովի կողմից ընդունվելիք որոշումն ավելի իրական լինի և իրավական հիմք ունենա, անհրաժեշտ է ապահովել բնակչության հայտնի իրավունքները, վերականգնել նրանց նախկին վիճակը, և միանում է Գեգեչկորու վերոհիշյալ առաջարկին:

Ե. Գեգեչկորին, այս անգամ գտնում է, որ անմիտ է մի հարցը շաղկապել մյուսին՝ Ղազախինը ղարաբաղյանի հետ, որ Ղազախի խնդրում հարկավոր է վերադառնալ հին տարանջատիչ գծին, և վերադարձնել փախստականներին, իսկ ղարաբաղյանում՝ անհրաժեշտ է բնակչությանը վերադարձնել իր բնակչության հին տեղերը, որից հետո ղնել բնակչության իրավական դրություն մասին հարցը, և դրանով իսկ խաղաղեցնել տարածաշրջանը:

Ադրբեջանական պատվիրակության համոզմամբ, վեհաժողովը Ղազախի վերաբերյալ հանձնաժողովի ղեկուցման առիթով պետք է ունենա իր տեսակետը և առաջար-

կում է ներքոհիշյալ բանաձևը. «Լսելով հանձնաժողովի զեկուցումը Ղազախի իրադարձությունների մասին՝ վեհաժողովը որոշում է. Ղազախի շրջանում, ուր տեղի են ունենում հայ-մուսուլմանական բախումներ, պետք է վերականգնվի մինչև բախումները եղած տարածքային իրավիճակը»³⁴:

Փոխարենը, հայկական պատվիրակությունը՝ ի դեմս Օհանջանյանի, առաջարկում է սեփական բանաձևը. հայկական պատվիրակությունն առաջարկում է ընդունել ընդհանուր բանաձև իրավական ստատուսի վերականգման մասին՝ միաձայն ընդունված ապրիլի 12-ին, այն հիմք ընդունել ինչպես Ղազախի, այնպես էլ մնացած շրջանների համար, ինչի մասին հիշատակվել էր դեռևս վեհաժողովի 1-ին բանաձևում (11 ապրիլի):

Այս բանաձևի հետ անմիջապես անհամաձայնություն է արտահայտում Խան-Խոյսկին, առարկելով երկու հարցերը իրար միացնելու դեմ, պատճառաբանելով, որ Ղազախում խոսք է գնում օտար տարածքի նվաճման, իսկ Ղարաբաղում՝ հենց բուն պետության ներսում ապստամբություն մասին, և որ Ադրբեջանի կառավարությունը ամեն միջոց կգործադրի, որպեսզի բնակչությունը օգտվի ազգային-մշակութային ինքնավարության բոլոր հնարավորություններից³⁵:

Այնուհետև Խան-Խոյսկու այն հարցին, թե ցանկանում են արդյոք հայերն «ազատագրել» Ղազախը, այսինքն՝ սեփական զորամասերը դուրս բերելով նշված տարածքից, Օհանջանյանը դրականորեն է պատասխանում: Այլևայլ փաստեր, որոնք առնչվում են սույն կոնֆերանսում քննարկված հարցերի հետ, ակնհայտորեն վկայում են, որ հայկական կողմը ներքուստ գտնվում էր ցայտնոտային վիճակում, թեկուզև վեհաժողովի բեմահարթակից փորձում էր իրավիճակի մեջ իրեն հարմար շտկումներ մտցնել և

ընդհանուր դրությունը փրկեր՝ ապահովելով հանրապետութեան ազգային անվտանգությունը: Այսպէս, Համո Օհանջանյանի 1920 թ. ապրիլի 18-ի նամակից՝ ուղղված Հայաստանի Հանրապետութեան մինիստր-նախագահ (այսինքն՝ վարչապետ) Ալ. Խատիսյանին, կապված վերոհիշյալ կոնֆերանսի աշխատանքների հետ, ակընհայտ է դառնում, որ հայկական կողմն ուներ որոշ տազնապներ՝ կապված թե՛ Ղարաբաղի, թե՛ հարակից այլ պրոբլեմների հետ: Համո Օհանջանյանը վերոնշյալ նամակում ուղղակիորեն ընդգծում է հետևյալը. «Ներկա պայմաններում միանգամայն հնարավոր չի ավելիին հասնել. ձեր նամակներից և տեղերից ստացվող հեռագրերից դատելով առկա ռազմական դրության մասին, մենք հարկադրված ենք գնալու ամենամեծ զիջումների»³⁶:

Իսկ վեհաժողովի ապրիլի 18-ի նիստում Օհանջանյանը նշելով, որ վեհաժողովը չցանկացավ կանգ առնել ապրիլի 12-ի բանաձևի վրա, որը սկզբունքային հիմք էր Ղարաբաղի, Օրդուբադի, Նախիջևանի և այլ վիճելի տարածքների հարցերի լուծման համար առաջարկեց, որ տարանջատիչ գիծն անցնի այն տեղով, ուր վեհաժողովի ապրիլի 11-ի որոշումը գինված բախումների դադարեցման մասին տեղ է հասել, և ամեն մի առանձին դեպքում վեհաժողովը պետք է ընդունի հատուկ որոշում, որի հետ համաձայնութուն են արտահայտում Վրաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները:

Ընդմիջումից հետո Մախարաձեն հրապարակում է բանաձևը. «Հանձնաժողովը, Ղազախի շրջանում հետագայում արյունալի բախումների ծագման հնարավորութեան կասեցման նպատակով, անհրաժեշտ է գտնում նշված վայրերում վերականգնել այն փաստական իրավիճակը, որը գոյութուն ուներ մինչև բախումները, և բնակ-

չությանը հնարավորութիւն ընձեռել վերադառնալու իրենց բնակավայրերը»³⁷:

Բանաձևն այս տեսքով ընդունվում է՝ մամուլում հրապարակելու նպատակադրումով:

Իսկ արդեն վեհաժողովի ապրիլի 19-ի նիստում խոսք է գնում անդրկովկասյան հանրապետութիւնների գործողութիւնների կոորդինացման մասին արտաքին քաղաքականութիւնի բնագավառում: Այս առումով Հայաստանի պատվիրակ Հ. Օհանջանյանը, համաձայնվելով Ադրբեջանի պատվիրակ Կրիչինսկու հետ այդ հարցի կարևորութիւն շուրջը, այնուամենայնիվ հարկ համարեց նշելու, որ ներքին հարցերի լուծման բարդութիւն պատճառով չի կարելի հետաձգել միջուկները, գտնելով նաև, որ կան երկու որակի ներքին հարցեր, որոնք հետաձգել չի կարելի, ինչպես կարծում է Կրիչինսկին: Ըստ Օհանջանյանի՝ հարվածը Ղարաբաղին՝ հարված է նաև Զանգեզուրին, հարվածը Սուրմալուին՝ հարվածի նախապատրաստութիւն է Հայաստանին: Ավելին, ըստ Օհանջանյանի, այդ հարցերի հետևում կանգնած է Թուրքիան, որ հայտնի հարվածները կրում են ռազմական բնույթ և իրենց տանում են ուղիղ Թուրքիայի սիրտը:

Ըստ նրա, տարածայնութիւններ կան և Վրաստանի հետ, սակայն այդ ներքին հարցերը կարելի է հետաձգել, որովհետև առանց վերոհիշյալ հարցերի լուծման խոսք անգամ չի կարող լինել գործողութիւնների կոորդինացիայի մասին արտաքին քաղաքականութիւնի բնագավառում³⁸:

Հակառակ ադրբեջանա-վրացական բանաձևի, հայկական պատվիրակութիւնն առաջարկում է իր բանաձևը, որը դառնում է քաջքշուկի առարկա, և կողմերը չեն ցանկանում այն կոնկրետացնել... Ըստ երևույթին նրանց (պարզ է Վրաստանին և Ադրբեջանին - Վ.Վ.) ձեռնտու էր՝

կապել Հայաստանի ձեռքերը, ազատ թողնելով սեփականը: Այնուհանդերձ, Տ. Բեկզադյանը ընթերցում է հայկական կողմի բանաձևը. «Քննարկելով արտաքին քաղաքականության կոորդինացման մասին հարցը՝ կապված ներքին բախումների վերացման հետ, Ադրբեյջանի, Հայաստանի և Վրաստանի վեհաժողովը գալիս է այն եզրակացություն, որ այդ բախումների առիթների և պատճառների վերացման համար անհրաժեշտ է նախապես երեք հանրապետությունների միջև կնքել մի շարք պայմանագրային բնույթի համաձայնություններ՝ հետևյալ հարցերի վերաբերյալ.

- 1) Բոլոր երեք հանրապետությունները փոխադարձաբար պարտավորվում են չձեռնարկել ոչ մի քայլ և ելույթ՝ ռազմական, քաղաքական, տնտեսական և այլն, որոնք կսպառնան հարևան հանրապետությունների անկախությանը և սուվերենությանը կամ կթուլացնեն արտաքին ուժերի նկատմամբ նրանց ղիմադրողականությունը,
 - 2) Ադրբեյջանի և Վրաստանի հանրապետություններից ոչ մեկը չի կարող այնպիսի սեպարատ համաձայնության մեջ գտնվել արտաքին ուժի հետ, որը կարող է սպառնալ այդ հանրապետություններից յուրաքանչյուրի անկախությանը և գերիշխանությանը: Ընդհանուր քաղաքականության և մասնավոր բնույթի հարցերի վերաբերյալ անհրաժեշտ է համաձայնությունների կայացում.
- ա) Յուրաքանչյուր հանրապետության վիճելի տարածքների ճշգրիտ հաստատագրում,
- բ) Հանրապետությունների միջև ամեն տեսակի ապրանքների և հումքի ազատ տրանզիտի տարանցումի հաստատում,
- գ) Հայաստանի կարիքների համար Ադրբեյջանի նավթի անարգել թողարկում,

դ) Հարևան հանրապետության արոտավայրերից օգտվելու հնարավորության ընձեռում՝ մյուսի՝ իր տնտեսական կյանքը դասավորել չկարողանալու կարողության բացակայության դեպքում,

ե) Հայտնի օտարածին բնակչության ազատ տեղաշարժ համապատասխան հանրապետության տարածքում՝ նրան աջակցություն ցույց տալով հողերի, ունեցվածքի և հանդակների փրկագնի տեսքով և այդ վերաբնակեցման պետական կազմակերպում,

զ) Համապատասխան հանրապետությունում ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովում,

է) Համաձայնություն գործերի հետ քաջաման մասին համապատասխան հանրապետության սահմաններից:

Համապատասխան հանրապետությունների միջև նշված պայմանագրերի կնքումով հնարավոր կդառնա և հատուկ պայմանագրերի կնքումը բոլոր երեք հանրապետությունների միջև արտաքին քաղաքականության կոորդինացման հարցի վերաբերյալ՝ նրանց գերիշխանության և ամեն տեսակի արտաքին ոտնձգություններից անկախության պաշտպանության իմաստով»³⁹:

Այս առումով Գեգեչկորին և Խան-Խոյսկին պնդում են իրենց նախկին տեսակետի վրա, այսինքն, սկզբում դեկլարացիայի ենթարկել սկզբունքը՝ հետո նոր մնացյալը: Մամիկոնյանը պնդում է հակառակը, ասելով, որ իրենք առանց նավթի չեն կարող ապրել, անհրաժեշտ է լուծել տարանցման (տրանզիտի) և այլ հարցեր, առանց որոնց աներևակայելի է արտաքին վտանգի դեմ հանրապետությունների կոորդինացված գործողությունների հարցը:

Համաձայնությունը չի կայացվում, և հարցը մտնում է փակուղի, ինչը և փաստագրում է վեհաժողովը⁴⁰:

Խորհրդաժողովը զբաղվում է նաև կոնֆեդերացիայի հարցով: Ադրբեյջանի պատվիրակությունը ներկայացնում է

«Անդրկովկասյան հանրապետությունների խորհրդի» նախագիծը: Առաջարկվում է երեք հանրապետությունների ներկայացուցիչներից կազմել մնայուն ազգամիջյան մի խորհուրդ, որի պարտականությունը պետք է լինի. «1) հոգալ հանրապետությունների արտաքին ապահովությունը և նրանց անկախության ու չեզոքության պահպանումը, 2) հսկել, որ հանրապետությունների միջև ծագող վիճելի խնդիրների լուծումը միջնորդ դատարանի կողմից՝ գործադրվի, 3) հետևել, որ կիրառվեն դաշնագրերը հանրապետությունների միջև, 4) մշակել միջհանրապետական դաշնագրերի նախագծեր, 5) ձգտել խաղաղությամբ լուծելու հանրապետությունների միջև ծագող վիճերը և եզրակացություններ անել առանձին հանրապետությունների կառավարությունների առաջարկով»⁴¹: Խորհուրդը պետք է կազմվեր 12 հոգուց. յուրաքանչյուր հանրապետություն պետք է տար 2 ներկայացուցիչ խորհրդարանի պատգամավորների համակազմից, և 2 հոգի կառավարությունից, մեկ տարվա ժամկետով: Խորհուրդը պետք է ունենար սովորական և արտակարգ նստաշրջաններ⁴²:

Այս առումով հայերը կտրուկ անհամաձայնություն չարտահայտեցին, սակայն և չհամերաշխվեցին խնդրի շուրջ, քանի որ նրանց առջև ավելի լուրջ խնդիրներ էին ծառայած, կապված թուրք-հայկական հարաբերությունների հետ:

Իսկ իրադարձությունները իրենց շատ երկար սպասեցնել չտվին:

Դեռ կոնֆեդերացիայի հարցը չփակած, ադրբեջանական պատվիրակությունն առաջադրեց գինվորական համազորակցության ռազմական գործողությունների միասնականության և ուղղորդման մասին առաջարկը՝ ընդգեմ Խորհրդային Ռուսաստանի: Վրացական կողմը, ելնելով իր վեհապետական իրավունքների դիրքերից, պահանջեց

սահմանագծման հարց, չմերժելով սակայն ադրբեջանական գործընկերներին: Հայերը սկզբունքորեն դեմ արտահայտվեցին բոլշևիկյան Ռուսաստանի դեմ ճակատ կազմելուն, որից ադրբեջանցիները խիստ դժգոհեցին: Սակայն Տ. Բեկզադյանը բավականին հաջող հիմնավորեց հայկական կողմի դիրքորոշումը. «Այո՛, քանի հողային հարցերը չեն լուծված, խորհրդաժողովի որոշումները ոչ մի արժեք չեն ունենա: Եթե ենթադրենք, որ խորհրդաժողովը որոշեր ընդհանուր ուժերով դուրս գալ արտաքին ոտնձգությունների դեմ ի պաշտպանություն մեր հանրապետությունների անկախություն, այսինքն՝ հյուսիսի վրտանգի դեմ, այն ժամանակ հայկական պատվիրակությունը կառաջարկեր քննել հարավային վտանգի հարցը, որովհետև թուրքերը, որքան հայտնի է, դաշնակից են բոլշևիկների հետ:

Բացի այդ, խորհրդաժողովը պետք է ստույգ տեղեկություններ ունենա այն համաձայնություն մասին, որն, իբր թե, գոյություն ունի Թուրքիայի և Ադրբեջանի միջև: Մեզ համար անհրաժեշտ է պարզել նաև Ադրբեջանի կառավարության վերաբերմունքը դեպի մեր պետականությունը»⁴³:

Բնականաբար տեղի ունեցավ շահերի բախում, և ոչ մի համաձայնություն էլ չկայացավ: Շուտով տեղի են ունենում իրադարձություններ, «օրակարգից» դուրս դեպքեր, որոնք էլ ի չիք են դարձնում գործադրված ջանքերը, ինչն ամենևին էլ պատահականություն չէր: Երկու կարծիք լինել չի կարող, պատմության դասերը հաշվի չառնել չի կարելի: Այս էլ հենց ներկա հետազոտության իմաստն ու արժեքն է:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում տարածաշրջանում և նրա շուրջ կատարվել են փոփոխություններ,

արմատական անցուղարձեր, որոնք իրենց կնիքն են թողել անցած ու ընթացող իրադարձությունների վրա: Այն է.

1) Կովկասի մեջ նախկին դատարկությունը, որ ստեղծվել էր հոկտեմբերյան հեղափոխության (կամ էլ հեղաշրջման) հետևանքով, ռուսական ցարական-կայսերական իշխանությունների քայքայումով, միայն ձևականորեն լցված էր տեղական նորածին «անկախ» հանրապետություններով, իրականում այն հաջորդվել էր գերմանա-թուրքական և բրիտանական ազդեցությամբ: Այդ հանրապետությունները, սակայն, նույնպես ի վիճակի չեղան լցնելու Մեծ Բրիտանիայի հեռացումից հետո առաջացած դատարկ տարածությունը:

Շահերի տարբերությունները և հիվանդագին ազգայնականությունը անկարելի դարձրին նույնիսկ տարրական համաձայնությունը նրանց միջև և նպաստեցին նրանց տկարացմանը, ինչը և պարզորոշ երևաց 1920 թ. անդրկովկասյան վեհաժողովի աշխատանքից:

Մեծ Բրիտանիայի մեկնումից հետո, հետևաբար, Խորհրդային Ռուսաստանը և վերակենդանացող Թուրքիան էին այն երկու պետությունները, որոնք Կովկասյան այդ դատարկությունը պետք է լցնեին: Բայց, իրերի բերումով, Հայաստանը չկարողացավ համաձայնության գալ այդ պետություններից որևիցե մեկի հետ: Հայաստանի և Թուրքիայի միջև Սևրի դաշնագրի ուրվականը կար, իսկ Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև կախվել էր Հայաստանի Հանրապետության խաբուսիկ հույսը՝ մեծ դաշնակիցների օժանդակության հետ կապված, դաշնակիցներ, որոնք ինչպես շատ դիպուկ նկատում են անգլիացի հետազոտողներ, Կովկասի պատմության գծով մասնագետներ Դեյվիդ Մարշալ Լանգը և Քրիստոֆեր Ջեյմս Ուոքլը, հայերին և հայ ժողովրդի քաղաքական լիդերներին հմտորեն կերակրում էին «Սև ծովից մինչև Միջերկրական

ծով տարածվող Հայաստան ստեղծելու երազային գաղափարով»⁴⁴: Այդ հույսերը տարան Հայաստանի Առաջին Հանրապետության (1918թ. մայիսի 28-1920 թ. դեկտեմբերի 2) ճակատագրական մեկուսացմանը և անկմանը: Երբեք էլ հական օգնություն դաշնակիցների կողմից չեղավ, միայն եղան սնամեջ հայտարարություններ ու խրախուսանքներ: Իսկ հարևանների հետ այնպես էլ տարբեր պատճառներով հնարավոր չեղավ լեզու գտնել, ինչը պարզորոշ երևում է ներքոհիշյալ հետազոտության նյութերից:

2) Հայերը հաշվի չառան, որ Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ն և մյուս մեծ երկրները միայն խոստումներ էին տալիս, որ նրանց պետական գանձարաններից մի ցենտ անգամ չըծախսվեց Հայաստանի վրա: Այն դե-յուրե այդպես էլ չըճանաչվեց, իսկ այդ ժամանակահատվածում Կովկասում տեղի էին ունեցել հական, անդառնալի փոփոխություններ:

Եվ սակայն Դենիկինի բանակի բոլշևիկներից պարտություն կրելուց հետո էր միայն, 1920թ. հունվարին, որ Դաշնակիցները Անդրկովկասյան հանրապետություններին իբրև անկախ պետություններ ճանաչեցին, նպատակադրելով Կովկասը և Պարսկաստանը հետ պահել բոլշևիկյան ազդեցությունից: Այդ ճանաչումը թելադրված չէր ազգերի ինքնորոշման միջազգային սկզբունքից, ինչպես դա կարծում էին, և առ այսօր էլ կարծում են որոշ միամիտ և թերհաս քաղաքագետներ: Այն պարզապես հիմնված էր այն պատճառաբանության վրա, թե քանի որ «Սպիտակ» ռուսական բանակները քայքայվել էին, և քանի որ ո՛չ Մեծ Բրիտանիայի, ո՛չ Ֆրանսիայի, ո՛չ էլ Իտալիայի կառավարությունները չէին կարողանում և չէին էլ ցանկանում որե՛վիցե գործ «տրամադրել» Կովկասի համար, պետք էր, որ զենքի, զինամթերքի և ուտեստեղենի օգնություն տրվեր այդ հանրապետություններին, որպեսզի ընդդիմանային բոլշևիկներին: Պետք էր, որ նրանք

«գիմադրեին» բոլշևիկներին, պաշտպանեին Կովկասը և մասնավորապես «պահակազորեին» Բաքվին: Ուրեմն, Մեծ Բրիտանիայի և դաշնակիցների կողմից Հայաստանի ճանաչումը իբրև դե-ֆակտո հանրապետություն՝ նպատակային էր, իսկ տրվելիք օգնությունը՝ պայմանական: Գեոպոլիտիկ այս իրավիճակի փոփոխությունները և դաշնակիցների վերաբերմունքի էական փոփոխությունը Հայաստանի նկատմամբ դիպուկ նկատել են վերը հիշված Դեյվիդ Մարշալ Լանգը և Քրիստոֆեր Ջեյմս Ուոքերը. «1920-ի ընթացքում աշխարհի իրավիճակը այնպիսի դրամատիկ փոփոխություններ կրեց, որ այլևս իմաստազրկվեցին դաշնակից տերությունների Հայաստանին տված խոստումները... բուռն վիճաբանություններից հետո... դաշնակցական կառավարությունը որոշեց խաղաղ կերպով իշխանությունը հանձնել բոլշևիկներին և ինչպես առածն է ասում, նրանք գերադասեցին “կարմիր լինել, քան մեռած”»⁴⁵:

3) Եվ վերջապես հետևյալը պետք է ընդգծված ասել. արդեն 1920 թվականի գարնանը իրավիճակը անդրկովկասյան տարածաշրջանում կտրուկ փոխվում է, և իրադարձությունները սկսում են սրընթաց զարգացումներ ստանալ և, մասնավորապես Արցախում, Ջանգեզուրում և դրանց շուրջ:

ա) Արցախում փաստական իշխանությունը, սկսած 1918 թվականի կեսերից գտնվում էր տեղի Հայոց Ազգային Խորհրդի ձեռքում: Վերջինս 1918 թ. մայիսից մինչև 1920 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում իր հրավիրած տասը համագումարներում և դրանից հետո էլ՝ մինչև ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան Երկրային կոմիտեի բյուրոյի (Կավբյուրոյի) 1921 թ. հուլիսի 5-ի տխրահռչակ որոշումը, չի ընդունել և չի ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: Սակայն, արդեն ասել ենք, որ եղել են

նաև վտանգավոր շրջադարձեր, քաղաքական սայթաքումներ. այսպես, 1919 թ. օգոստոսի 12-ին կայացած Ղարաբաղի 7-րդ համագումարը, քննելով ստեղծված դրուժյունը և համոզվելով, որ դրսից ոչ մի օգնություն չի կարող ստանալ, անգլիացիներն էլ պաշտպանում են ադրբեջանցիներին, իր հերթին Հայաստանի կառավարությունն էլ ի վիճակի չէ լուրջ օգնություն հասցնելու, ծանր ու թեթև անելով և կշռելով սեփական հնարավորությունները, որոշեց օգոստոսի 15-ին ընդունել Բաքվի հետ համաձայնությունը, և այսպես ստորագրվում է 1919 թ. օգոստոսի 22-ի հայտնի տխրահռչակ համաձայնագիրը, «հուսալով», որ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը իբր թե «անվերապահորեն և արդարացիորեն» լուծվելու է մեծ տերությունների եվրոպական Հաշտություն վեհաժողովում: Բնականաբար Ադրբեջանի քաղաքական գործիչ Սուլթանովը դա համարեց նոր «դարաշրջան» Ղարաբաղի կյանքում: Եվ ինչպես միանգամայն իրավացիորեն գրում է Հայաստանի Առաջին Հանրապետության վերջին վարչապետ Ս. Վրացյանը. «Նոր դարագլուխ, դժբախտաբար, չբացվեց, բայց Սուլթանովը իրավունք ուներ հպարտանալու, որովհետև, թեև ժամանակավոր կերպով, Ղարաբաղը դառնում էր Ադրբեջանի մաս: «Ժամանակավոր»-ը «մշտական» դարձնելը ապագայի հարց էր, և ադրբեջանցի գործիչները չէին հրաժարվում այդ մտքից»⁴⁶: Ադրբեջանն էլ ամեն տեսակի որոգայթ լարում էր՝ կոտրելու համար դարաբաղցիների դիմադրական ոգին, օգտագործելով նաև ուժ, որին հայերն, անշուշտ, պատասխանում էին, ինչպես կարող էին:

Արցախցիների ազատագրական պայքարին ադրբեջանա-թուրքական միացյալ զինյալ ուժերը պատասխանում են հայերի զանգվածային կոտորածներով: Օրինակ՝ 1920 թ. մայիսի 23-ին մուսավաթական կառավարությունը

կազմակերպում է Շուշիի հայուլթյան կոտորածը, որի հետևանքով զոհվում են հազարավոր հայեր: Շուշիի հայկական թաղամասը թալանվում է և հրկիզվում:

բ) Ահա այս իրավիճակում էլ, Դենիկինի վերջնական պարտութամբ Ռուսաստանը մի նոր ազդակ դարձավ Հայաստանում և Անդրկովկասում: Կարմիր բանակը, իր դեմ բարձրացրած պատենչը քանդելով, մտավ Հյուսիսային Կովկաս, իջավ Անդրկովկաս և Բաքու: Եվ դա այն ժամանակ, երբ անկախ Ադրբեջանի կառավարությունը իր զինվորական ուժի մեծ մասը կենտրոնացրել էր Ղարաբաղում հայերի ապստամբությունը ջախջախելու, և Ղարաբաղը, ինչպես նաև Զանգեզուրն ու մնացյալ հայկական տարածքները վերջնականորեն Ադրբեջանին միացնելու համար:

գ) Ռուսաստանի մոտքը Անդրկովկաս հարկադրեց նաև Հայաստանի իշխանություններին որոշակի ուղղումներ մտցնել իրենց կառավարության դիվանագիտական ձեռագրում, և բանակցություններ սկսել Մոսկվայի հետ՝ կարգավորելու փոխհարաբերությունները միմյանց հետ և ըստորագրել բարեկամության դաշնագիր, որը սակայն արդյունք չտվեց տարբեր պատճառներով. անհրաժեշտ հետևողականություն չցուցաբերվեց, բացի այդ էլ աշխարհաքաղաքական իրավիճակի չափազանց կտրուկ դահավիժումները և շահերի հարաբերակցության նոր տարբերակները առաջադրեցին նոր լուծումներ, որոնք Հայաստանի համար անօգուտ եղան, և չնպաստեցին իրավիճակի կայունացմանը, արդյունքում կատաստրոֆիկ ֆիասկոն 1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսված թուրք-հայկական արդետաբեր պատերազմում և Ալեքսանդրապոլի ամոթալի պայմանագիրը Հայաստանի համար, որի արդյունքում բոլշևիկները գրեթե նույն օրը կնքված Երևանի համաձայնագրի հետևանքով առաջացած նոր իրավիճակում ստացան

ծանր ժառանգութիւն՝ շուրջ 10 հազար քառակուսի կիլոմետր տարածք՝ մոտ 1 միլիոն բնակչութեամբ, որի մի զգալի մասը՝ սովորաբար գաղթականներ էին:

դ) Դեպքերն ու իրադարձութիւններն այս խճճված և բարդ ժամանակաշրջանում գարգանում էին գլխապտույտ արագութեամբ: Բոլշևիկացած Ադրբեջանի Հեղկոմը մի վերջնագիր է հղում Երևանի կառավարութեանը, որով պատերազմ էր հայտարարում Հայաստանի դեմ, եթէ հայկական զորքերը անմիջապէս, մինչև ապրիլի 30-ը, չհատարկէին Ադրբեջանի «անվիճելի հողամասերը»: Հեղկոմը նույնիսկ կարիք էր զգացել այդ հողամասերի անունը հիշատակելու, և անմիջապէս ռազմաքաղաքական պատրաստութիւններ էր տեսել:

ե) Ահա այս արմատական անցուղարձերն էին այն գլխավոր պատճառները, որոնք հանգեցրին Անդրկովկասյան Հանրապետութիւնների 1920 թ. գարնանային վերահիշյալ խորհրդաժողովի աշխատանքների ձախողմանը, նրանում քննարկվող հարցերի մշուշապատութեանը և անորոշութեանը, և բնականաբար, ընդունված որոշումների պայմանականութեանը, և առհասարակ՝ վեհաժողովի տրամաբանական ձախողմանը, արդյունքների գրոյականութեանը:

Հենց այս իրավիճակն էլ հանգեցրեց Հայաստանի Առաջին Հանրապետութեան ճակատագրական մեկուսացմանը, և բրիտանական զորքերի հեռացումից հետո էլ Ադրբեջանի և Հայաստանի միջև թշնամութեան բորբոքմանը՝ Ղարաբաղի և Զանգեզուր-Նախիջևանի և այլ հարցերում:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տես՝ Վրացյան Սիմոն. Հայաստանի Հանրապետութիւն: Եր.: Հայաստան, 1993, էջ 394 - 395:

2. Տես՝ նույն տեղում, էջ 396:
3. Տես՝ նույն տեղում, էջ 397:
4. Տես՝ Բանբեր Հայաստանի արխիվների. - 1996. - N^o 1 (98). - էջ 74:
5. Տես՝ «Ժողովուրդ», 25 ապրիլի, 1920 թ., N^o 66:
6. Տես՝ ՀՀ Պետական Կենտրոնական Պատմական Արխիվ (այսուհետ՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 200, ց.1, գ. 548, թ.158-160:
7. Տես՝ նույն տեղում, թ. 164:
8. Տես՝ նույն տեղում, թ. 165: Տես նաև՝ «Ժողովուրդ», 28 ապրիլի, 1920 թ., N^o 68:
9. Տես՝ «Ժողովուրդ», 28 ապրիլի, 1920 թ., N^o 68:
10. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 548, թ. 166:
11. Տես՝ նույն տեղում:
12. Տես՝ նույն տեղում, թ. 167-170:
13. Տես՝ նույն տեղում, թ. 167-168:
14. Տես՝ նույն տեղում, թ. 167-169:
15. Տես՝ նույն տեղում, թ. 167-170:
16. Տես՝ նույն տեղում, թ. 168-170:
17. Տես՝ նույն տեղում, թ. 169-170:
18. Տես՝ նույն տեղում, թ. 170-171:
19. Տես՝ նույն տեղում, թ. 171:
20. Տես՝ նույն տեղում, թ. 171:
21. Տես՝ նույն տեղում, թ. 172:
22. Տես՝ նույն տեղում, թ. 173:
23. Տես՝ նույն տեղում, ֆ. 200, ց.1, գ. 516, թ. 44-45:
24. Տես՝ Բանբեր Հայաստանի արխիվների. - 1996. - N^o 1 (98). - էջ 80:
25. Տես՝ նույն տեղում, թ. 175-176:
26. Տես՝ նույն տեղում, թ. 178-179:
27. Տես՝ նույն տեղում, թ. 180:
28. Տես՝ նույն տեղում:

29. Տես՝ նույն տեղում:
30. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 200, ց.1, գ. 576, թ. 4:
31. Տես՝ նույն տեղում:
32. Տես՝ նույն տեղում:
33. Տես՝ նույն տեղում, թ. 5-6:
34. Տես՝ նույն տեղում, թ. 7-9:
35. Տես՝ նույն տեղում, թ. 8-9:
36. Տես՝ Բանբեր Հայաստանի արխիվների. - 1996. - N^o 1 (98). - էջ 82:
37. Տես՝ նույն տեղում, թ. 13:
38. Տես՝ նույն տեղում:
39. Տես՝ նույն տեղում, թ. 13-14:
40. Տես՝ նույն տեղում, թ. 16-17:
41. Տես՝ Սիմոն Վրացյան, նշված աշխատությունը, էջ 399:
42. Տես՝ նույն տեղում:
43. Տես՝ նույն տեղում, էջ 400:
44. Տես՝ Դեյվիդ Մարչալ Լանգ, Քրիստոֆեր Ջեյմս Ուոքլըր. Հայերը: (Հայ ժողովրդի պատմություն/խմբ.՝ Կ. Ս. Խուրադյան):~ Եր.: Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագր., 1992, էջ 31:
45. Տես՝ նույն տեղում, էջ 32:
46. Տես՝ Սիմոն Վրացյան, նշված աշխատությունը, էջ 341-342:

ՎԱՆԻԿ ՀՐԱՆՏԻ ՎԻՐԱԲՅԱՆ

Հայաստանը անդրկովկասյան հանրապետութիւնների 1920
թվականի ապրիլյան վեհաժողովում
(Հայոց քաղաքական պատմութեան մի հարցի շուրջ)

ВАНИК ГРАНТОВИЧ ВИРАБЯН

Армения на апрельской конференции
Закавказских республик 1920 г.
(Вокруг одного вопроса политической истории Армении)

Vanik Hrant Virabyan

Armenia on the conference of the
Transcaucasian republic's in April 1920
(Over the one question of the political history of Armenia)

Մասն. խմբագիր՝ պատմ. գիտ.թեկնածու՝ Գ. Ա.
Հովակիմյան
Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝ Կ. Պ.
Ներսիսյան